

04 NOV 2009

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

281(=91.54)

Խ - 99

ԾՐԱԳԻՐ

ԲԱՐԵՆՈՐՈՓՄԱՆՑ

ՄԵԼՔՈՆ ԿԻՐԱՔԵԱՆԻ (ՀՐԱՆՏ) ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ

ԵՒ

ՀԱՅՐԻԿԻՆ ՊԱՏԿԵՐՈՎ




Կ. ՊՈԼԻՍ

Սուրբան Համամ, Մուր Թառ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ Յ. Գ. ՓԱՆԳԱՇԵԱՆ

1909

1 JUN 2013





ԻՎԱՆ ԶԱՅՐԻ

281(-91.54)

խ-99

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԾՐԱԳԻՐ

ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ



3496

1807
30455

Կ. ՊՈԼԻՍ

Սուրբան Համալսարանի Թանգարան

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

1909



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՇՐԱԳԻՐ

ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Մեզմէ, թերեւ, ոչ ոք աւելի իրաւունք ունէր տեսնել այն նոր օրերը որոնք սկիզբն առին Յուլի 11 էն աստին, այո՛, ո՛չ ոք այնքան աւելի՛ քան թէ իրիմեան ինքը:

Իր Հայրիկ անունը շինուած է իր խօսքերուն այն արձագանգէն որ կրկնուած է ամբողջ երկրի մը, ազգաբնակութեան մը սրտէն, ծոցէն:

Արեւելքի ծնունդ, աւանդութեան մէջ օրորուած մանուկ, ապրած՝ բերդի մը տակ որ իր անխօս բեւեռագիրներով շատ բան քարոզած է միշտ, մեծցած՝ ծովափի մը դրացնութեան մէջ որ ակահատեա վկան եղած է, իր ծփանքներովը, իր փրփուրներովը, չին Ազգի մը պատմական բոլոր յեղաշրջութեանցը,

Ուսած՝ վարագի վանքի իսաչերուն շուքին տակ,
կրօնաւոր՝ դարձած այն միամիտ հաւաքով որ հնու-
թեան հոգիին դրոշմը եղած է,

Աղօթած՝ բարձունքներու վրայ որոնք աստ-
ւածներու և Աստուծու սիրելի եղած են, լացած՝
սրբավայրերու մէջ ուր ամէն մէկ կէտի վրայ
ինկած է կրօնքի զոհ մը, հայրենիքի նահատակ մը,

Խմբուած՝ այն ուժերով որոնք դուքս կ'ելեն
տեղէն, հողէն, հովէն, ծովէն, ծփանքէն, ծածանքէն,
խնկաւտուած՝ այն բուրումներէն որոնք կը ծաւա-
լին, կը տարածուին խոտի իւրաքանչիւր շիւղէն,
ծառերուն մէջ մի ճղիկէն, ծաղիկներու անցնիւր
թերթիկէն,

Շինուած էր Հայոց Հայրիկը, հասկումը՝ տի-
տան, թիկնաւէտ, աչքերովը՝ վճիտ, ձայնովը՝
անուշ, խօսքովը՝ քաղցրիկ, նայուածքովը՝ ազուա-
կան, հմայքով լի:

Հայրենիքը՝ անոր մէջ իր բոլոր ձայնը ունէր,
կրօնքը ատոր մէջ իր ամբողջ մեկնութիւնը կը
գտնէր, հին ցեղ մը՝ իր ժառանգական ամէնէն
ազնոր տիպաբեր կը ցուցադրէր. իսկ ժողովուրդ մը,
հայրենիքի մէջ խոշտանդուած, չարչրկուած, ջը-
լատուած, կը դաւանէր իր Հայրիկը:

Այդ Հայն է որ ամենքէս աւելի իրաւունք ու-
նէր տեսնել Արարատէն վար հայրենիք մը, ծխա-
ծանի աղեղին տակ՝ ժպիտը երեսին վրայ, նոր
կիանքը մաշած աչքերուն մէջ ցոլացիկ:

Վա՛խ որ չտեսաւ ան:

Բայց իր ձայնը, իր բառերուն մէջ ու բառե-
րովը կանգ առած, կենդանի քարոզ մըն է թէ
ինքը ի՛նչպէս բմբուսած է բարեկարգելի հայրենիքին
Ծրագիրը:


Ատ է ահա՛ որ կը խօսի մեզի, միւսնոյն գո-
րովանքով, գուրգուրանքով չարչրկուած, հարստա-
հարուած Հայուն և Քիւրտին վրայ:

Պէտք է սքանչացումով լսել զինքը յետ մահու,
տեսնել թէ ինչպէս արեւելեան տէրվիչ մը, մտքի
լայնութիւնով մը՝ գուրս ելած է նեղմիտ հայրե-
նասիրութենէն, և գթով, հայրական աչքով դիտած
քիւրտը, լեռնականը որ, հրացանը ձեռքին, փամ-
փուշտները կապած մէջքին, և կամ դաշոյնը երեք-
ցնելով, դահլիճ մըն է լեռներու կողքին բազմած:

Ի՞նչ ընէ քիւրտը. իր բնակութեան համար
ամենէն աղահով տեղը քարայրն է շատ տեղ. վա-
խով կասկածանքով կը քնէ իր վրանին պատտաւին
տակ, և զինքը վարող օրէնքները, իշխանութիւնը
ուրիշ միջոց տուած չեն ապրելու, եթէ ոչ գնդակն
ու դաշունին ծայրը և հացի կտորիկ մը արխնի
փրփուրին վրայ նետուած:

Այս ծրագիրը որ նոր լոյս կը տեսնէ, գրուած
է 1876ին, այն ատեն երբ մեծ յոյս մը, ծիրանի
թռիչքով, կը տատանէր Հայութեան հորիզոնին
վրայ: Հայրիկը, Սիմօն Ծերունիի պէս, ոգեւորուած
զրկեր է այս մանուկ-յոյսը, որ խկոյն ի բաց թռած է
պրոմթեան սլացքով և զինքը թողած սրտաբեկ
բազուկները պարապութեան վրայ կարկառուն:

Հայրիկ, անկէ ի վեր, պահած է իր այդ ծրագիրը, — կապույտ թերթիկներու վրայ: Էջմիածնէ զարձիս՝ ամենէն թանկագին ընծան է որ կը բերեմ թուրքիոյ Հայութեան՝ նորածին Հայրենիքին իրրեւ արդադիր նուէր մը Հայրիկէն, Ամանորի առթիւ:



ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ԾՐԱԳԻՐ

1826

Այսպէս կը համարեմ և կը հաւատամ այժմէն որ գաւառացի գիւղական ժողովրդոց այցելութեան ժամանակն հասած է, քանզի քիւրտերուն բարեկարգութեան խնդիրը Բ. Դրան ուշադրութիւնը գրաւած է այսօր. որոյ վասն Յանձնաժողովը կարգուած է բարեկարգութեան ծրագիր մը պատրաստել. ուստի բաղդ և պարտք կը համարեմ ինձ՝ եթէ յաջողեմ սոյն տեղեկագրովս մասնակից գտնելիլ այդ վերանորոգ և ակնարհաչէն ջանից, որոց ձեռնարկութիւնն ու նպատակը կայսերական երկրին նոր կեանք, նոր յառաջդիմութիւն և նոր փառք կը խոստանան:

Չը գիտեմ, գաւառապետ պաշտօնեայք մինչև ցարդ ընդհանրապէս Քիւրտերու ներկայ գրութեան համար ի՞նչ տեղեկութիւն հաղորդած են Բ. Դրան. և կամ թերեւս այնպէս կարծուի թէ Քիւրտերն սոյն են՝ ինչպէս էին երբեմն՝ աստի իբր երեսուն տարի յառաջ. մինչ յայտնի ապստամբք էին տէրութեան դէմ և իրենց այլ և այլ ցեղապետներով կը տիրապետէին ժողովրդոց վերայ, զօր օրինակ անուանի Պէտրխան պէյ, իման Մահմուտ, իման Աւտալ, և այլն, զորս առ հասարակ նուաճեց, նկուն դարձուց յիշատակաց արժանի Օսման փաշան. ուստի Քիւրտերուն բոլոր ցեղապետաց մէջ երբեք մի յայտնի և զօրաւոր ապստամբ չկայ,

և իրենց այգիման զիրքով բնաւ նշանաւոր զօրութիւն մը չեն կազմեր, որոց բնակութիւնը և սահմանը զրեթէ խիստ ցիր ու ցան վիճակի մէջ է, և ընդհանրապէս ամփոփուած են Տիգրանակերտի, Կարնոյ կուսակալութեանց և առաւել մեծ մասամբ վանայ Միւթէսարըֆութեան ներքեւ, որոց ընդարձակ սահմանին մէջ տարածուած են մինչև Պարսից և Ռուսաց սահմանադրութիւնը: Իսկ հարաւոյ կուսէ Տօրոսի լեռանց զօտիներէն սկսեալ մինչև Բաբելոնի սահմանները կը հասնին:

Քիւրտերու ցեղապետները թէև հազար կամ չինգ հարիւր տուն և վրան ունին իրենց առանձին առանձին տիրապետութեան ներքեւ, սակայն այդ ցեղերն ու ցեղապետները ի բնէ անտի միշտ թշնամի և անհաշտ հակառակորդ են միմեանց հետ, ինչպէս Հէյաթբանցի կոչուած ցեղը՝ Հասնացի և Ճիպրանցի ցեղերուն դէմ. նմանապէս ուրիշ ցեղ մի՝ ուրիշ ցեղի դէմ ռիս և թշնամութիւն տանելով՝ միշտ իրենց սովորական գործն է իրարմէ յափշտակել, աւարել, սպանանել և մերթ ևս կատաղի վրէժխնդրութեամբ իրենց ցեղերով բանակ կը կազմեն և միմեանց վրայ կը յարձակին, որոց կուոյ ասպարէզը՝ երկրագործ ժողովրդոց դաշտերն, անդատաններն են, որք առհասարակ նոցա անկարգ հրոսակաց առաջ առաթուր կը կոխտուին և իրենց ամէն վատուակ ու ստացուածք աւարտութեան կը մատնուին: Շատ զարմանք է այս, Տէրութեան երկրին մէջ զինուորական բանակին մօտ, տեղա-

կան կառավարութեան աչքին առաջ ինչպէս կը համարձակին նոքա կոռույ բանակներ կազմել. եթէ այնպէս կարծուի թէ տեղական կառավարութիւն իւր սահմանապահ զօրքերով կարող չէ Քիւրտերու արշաւանքները զսպել, սուտ կը խօսիմք. այլ ստոյգ խօսելով պէտք է խոստովանիմք թէ տեղական կառավարութիւնք այս մասին շատ պարտազանց գտնուած են իրենց պաշտօնին մէջ և պատասխանատու Բ. Դրան առաջ:

Վասն զի եթէ նոքա արթուն կառավարութեամբ հսկեն, եթէ Քիւրտերու ցեղապետները և թօսուոն կոչուած սոհմական Սեպուհները հաստատուեն երաշխաւորութեամբ զսպուին, և մերթ ևս նոցա խիստ ոճրագործ հարստահարիչները անաչառ օրինօք պատուհասին, և երբ տեսնան ու հաւատան քիւրտերն թէ իրենց չարութեան պատիժ կայ, անհաւրին է որ նոքա իրենց այգիման տկար դրութեամբ կարենան խլրտիլ և Տէրութեան երկիրն ապականել:

Ուստի ճշմարտութեամբ պէտք է այս եզրակացութիւն հանեմք թէ Քիւրտերուն բազմազիմի հարտահարութիւնը՝ իրենց վայրենութենէն ու զօրութենէն չէ այնչափ, որչափ տեղական կառավարութեանց անփոյթ և ապիկար դրութենէն, և մերթ ևս նոցա նպատակաւոր թողտուութենէն, որպէս զի առիթ ունենան մեծամեծ կաշառաւորութեամբ, այսինքն, ոչխարով, խզով, պանրով, նժոյգ ձիերով, գեղեցիկ գորգերով և ոսկւով իսկ տուժել զքիւրտն:

Ո՞վ չգիտեր և չվկայեր թէ երբ տեղական կառավարութիւնք կը զեղծանին և այս կերպով կը վարին իրենց քաղաքային պաշտօնին մէջ, որ իսպառ ընդդէմ է Տէրութեան կամաց և օրինաց, Քիւրտերն ևս իբրեւ իրաւունք կը համարին իրենց կաշատառութեանը փոխարէն՝ երկրագործ ժողովուրդը հարստահարել, և առ այս՝ նոքա փաստ ևս ունին և յառաջ կը բերեն ասելով, թէ մենք ևս կառավարութենէն կը հարստահարուինք։ շատ ճիշդ է թէ որ այնպէս դատենք թէ Քիւրտերը կերպով մը չարժական և շահատուկալուծներ եղած են տեղական կառավարութեան ձեռք։

Հանապազօրեայ փորձ և իրողութիւնք կը հաստատեն զայս. վասն զի երբեմն ինչո՞ւ համար արդեօք Քիւրտերուն հարստահարութիւնք փոքր ինչ կը դադրին և երկրագործ ժողովուրդը պահ մը չունչ կ'առնու. այդ յայտնի է, զի երբ տեղական իշխանութիւնք արդար և սաստող իշխանական արժանաւորութեամբ կը կառավարեն, գիտեա թէ ամէնքը կը թեալ քաղաքացի դարձեր են։ Քիւրտերը թէպէտ քաղաքներէ և քաղաքային կը թուութենէ հեռի՝ լեռնական կ'իստավայրերն ժողովուրդ կը համարուին, սակայն շատ սրամիտ և շատ ճարտար են, և իրենց երկրին քաղաքականութեան խաղեր և հաշիւներ քաջ գիտեն։ Նոքա՞ երբ նոր կ'ուսակալ և կառավարիչ մ'երթայ, լեռան գլխէն աւագ աչքով կը գիտեն բազմապարզ և բնականաբար ի տես կուգան մի քանի ան-

գամ կը փորձեն և այնուհետեւ գիտեն որոշել իրենց ընթացքը, և թէ տղէտ ևս լինին, Քիւրտերը շատ ուսուցիչ վարժապետներ ունին, լրտեսներ ունին, նոյն իսկ կառավարութեանց տուները, որք ի հարկին պաշտպան և ներկայացուցիչ են, որով շատ անգամ նոցա չնորձիւ սիրով կը տուժեն. բանտէ և պատուհասէ կ'աղատին և դարձեալ ապահով լինելով՝ վերստին կ'սկսին իրենց հայրենի արուեստը։

Խօսինք այժմ Քիւրտերուն ուժին և զօրութեան վերայ, որոց համար թերեւս տեղական կառավարութիւնք անգիտութեամբ՝ սխալ տեղեկութիւն հաղորդած են Բ. Դրան, որպէս թէ Քիւրտերն անաւոր զօրութիւն մի կը կազմեն և կամ թէ նոցա կարգադրութեան համար տէրութիւնը կը պարտաւորի զօրաց բանակներ հանել և մեծ գանձ մսխել։

Նոքա եթէ այսպէս կը խօսին, կը գրեն և կը համոզեն զԲ. Դրան, անշուշտ նոցա նպատակն այն է, զոր վերագոյն բացատրեցի անպատրուակ կերպով թէ Քիւրտերու ազատ և անսանձ կեանքը տեղական կառավարութեանց համար շահաբերութեան մշտնջենաւոր կալուած մը է և նոցա յոռի նպատակն այն է որ այդ կալուածը յարատեւէ, բնաւ չի խորհելով և չը հոգալով թէ Քիւրտերուն այդ ինքնազուլիս զիրք և վիճակ՝ Տէրութեան անսպառ գանձ կը վատնէ, երկրին շահ և բարգաւաճումը կը քանդէ, աշխատասէր երկրագործին վատաւը կ'աւարէ և շատ անգամ ևս ցորենի և խոտի գէգերը

բարբարոս վրէժխնդրութեամբ կը հրկիզէ, գիւղացիին առանց հացի և անասուններն առանց դարմանի կը թողու ձմռան սառնամանեայ օրերուն մէջ:

Քիւրտը հերկագործ խօփին երբեք կարեւորութիւն չտար. նամանգազ և զերանդիէն իրեն համար զէնք կը ձուլէ: Քիւրտը զէնք ունի և կը կրէ, այլ զինուոր չէ. կը կարծուի թէ Տէրութեան հպատակ է, հպատակ չէ. երկրի արքունական տուրքերուն բնաւ մասնակցութիւն չունի, բաց ի ոչխարի տուրքէն, և այն ևս ըստ մասին առանց հաշուելոյ. դաշտային և լեռնային հողերուն ամեն նապատուական և արդիւնաբեր մասն իրենք զրաւած են, առանց բնաւ կալուածագրի. սխալ չէ՝ թէ որ ըսենք թէ իրենց սահման և կալուածագիրը Տէրութեան օրինաց անգործածութիւնն է:

Ստոյգ է որ Քիւրտերը հին ժամանակուան սէս գիւղերը տուները չեն ձմերկ. նոքա այժմ շատ գիւղեր չիներ են. բայց միայն ձմրան համար, և երբ դարուն կայ՝ նոքա դարձեալ ըստ մեծի մատին լեռանց հովասուն վայրերը վրանաբնակ կը շրջին, միշտ տեղէ տեղ փոփոխելով, և ասով մեծ գիւրութիւն ունին նոքա իրենց ամէն աւար յափշտակութիւն ամարան մէջ կատարել: Այդ թափառալի Քիւրտերու համար մի ձի և զէնք շատ է և բաւական. նոքա կարող են այդ փոքրիկ զրամազլխով տարին ըսոր ձրի հաց ուտել հաւով և հաւկիթով հանդերձ, միանգամայն ևս ձիերուն առատ առատ դարի կերցնել. վա՛յ ա՛յն գիւղացւոյն որ քիւրտ մի

գոհութեամբ իւր տունէն դուրս չը հանէ, զի քիւրտին վրէժխնդրութիւն արագ արագ կը հասնի իւր վրայ. եղներն ակօսէն և ոչխարներն ի դաշտէն կը յափշտակուին և կը տարուին:

Հարստահարեալ անձարակ գիւղացին միթէ կը համարձակի՞ տեղական կառավարութեան առաջ բողոքել իւր զրկանաց համար, զօրհանապազ աչքին առաջ բերելով՝ ապագայի վրէժխնդրութիւնը: Եւ միանգամայն քիւրտն իրեն զրացի ըլլալով՝ միշտ նորա վրէժխնդրութեան ենթակայ է. թող այս, ստոյգ և փորձով գիտէ նա՝ որ քիւրտն իւր սովորական կաշառատուութեամբ կարող է դարձեալ ազատիլ կառավարութեան ատենէն և այնուհետեւ լուծել իւր վրէժը:

Քիւրտին համար ոստիկանութիւն չըկայ, շատ զարմանալի է այս կէտը, վասն զի ոստիկանութեան կարեւորութիւն և հսկողութիւնը միայն տեղական կառավարութեանց և քաղաքներու մէջ ամփոփուած է: Նոյնպէս զօրանոցներն և զինուորներն. որպէս թէ այդ պահպանութիւնը միայն քաղաքացւոց, իրաւունք լինէր, և չինական ժողովրդոց համար՝ ո՛չ երբեք: Եթէ քաղաքի գողերն երբեմն զիշերապահուն մէջ խիստ զաղտագողի և երկիւղով միայն մի քաղաքացիի տունը կը կողոպտեն, Քիւրտերն ցերեկի արեւուն առաջ առանց բնաւ ակնածութեան կարող են դաշտի հօտն ու նախիրը կոխոպտել: Ի՞նչ կարող են ընել գաւառապետի եղած փոքրիկ պաշտօնեաներն կամ Գրք-

սէրտարի ըստած պահակները՝ իրենց սակաւ և ապիկար գրութեամբ, որք շատ անգամ նոյն իսկ խորհրդակից և գողազարան են աւարառու Բրդաց:

Քիւրտերու խժաբարոյ կեանք և նոցա հարբտաճարութեան ձևերը շատ բազմազան են: մենք միայն հարեանցի յիշատակութիւն այսքան բաւ կը համարիմք: Այժմ հարկ է ևս նկատողութեան առնուլ թէ ի՞նչ և որչա՞փ է Քիւրտերու կարեւորութիւն և շահ Տէրութեան երկրին մէջ:

Աշխարհ կը վկայէ և Տէրութեան Գանձուն հաշիւը առ այս մեծ ապացոյց է, որ Տէրութեան երկրի բնակչաց մեծ մասն երկրագործ և դաշտային ժողովուրդն է, և հետևապէս նոցա վաստակ և արգիւնքն է երկրին հարստութեան աղբիւրն և շահ: Քիւրտերն ևս այս շահաբեր ժողովրդոց կարգին մէջ կ'ապրին իբրև դաշտային ժողովուրդ. բայց միայն ոչխար, պաճարեղէն և ձի դարմանելու կը պարապին: Իբաւ է որ այս պարապումն ևս երկրագործութեան մէկ շահաբեր ճիւղն է, եթէ արդարութեամբ, օրինօք և տիրապէս հպատակութեամբ պարապէին և մշակէին այդ օգտակար ճիւղը: Բայց քանի որ նոքա ուրիշի ցանածը կը հնձեն, ուրիշի վաստակը կը կողոպտեն, ուրիշի դարմանածը կը յափշտակեն, և այս վարմունքով երբ վաստակաւոր երկրագործին շահերը կը բռնաբարեն, նոյն իսկ Տէրութեան Գանձուն չէ՞ այս միտաբ, և թէ այս միտաբն զէմը կը համապատասխանէ՞ իրենց տուած շահը, որուն համար վերը խօ-

սեցայ թէ խիստ դուգնաքեայ և աննշան է: Սակայն չեմք ժխտեր թէ Քիւրտերն բոլորովին անպէտ և անպիտան են Տէրութեան երկրին: Այո՛, շատ արդիւնաւոր և շահաբեր կը լինին նոքա, եթէ տեղական կառավարութիւնք ամէն հոգ ու ջանք տանին նոցա ներկայ գրութիւնը փոխել և իսկապէս երկրագործ ժողովուրդը կազմել զիրենք, և գծուալին չէ այս:

Խօսինք նաև Քիւրտ ազգին այլ կարեւորութեանց վերայ, զորս տեղական կառավարութիւնք գուցէ իբրև քաղաքապետութիւն իմն կը համարին և բարւոք կը դատեն որ Քիւրտերն իրենց հին գրութեամբ մնան:

Նախ այնպէս կը կարծեն թէ նոքա տէրութեան բանակին համար քաջազէն հեծելազօր մի են և ի հարկին շատ պիտանի: Այս անստոյգ կարծիքը հերքելու համար բաւական է արեւելեան պատերազմի զէպք՝ յորում այդ կարծեցեայ քաջ շահատակներ տէրութեան բանակին առաւել խոչընդոտներ եղան. կուռց առաքելզին մէջ նոքա իրենց աւարը կ'որոնէին և միայնպամայն ևս ի փախուստ կը դառնային թնդանօթին ձայնէն: Նոքա փոխանակ թշնամոյն բանակ կողոպտելու, նոյն իսկ տէրութեան բանակ և ծառայող խեղճ ժողովուրդը կողոպտեցին: Քիւրտերու քաջութիւնը սոսկ հռչակ է, և նոքա քաջ են միայն ստրուկ և անզէն ժողովրդին վրայ, քաջ են աւարելու և կողոպտելու մէջ: Երկրորդ՝ շատ վատ, յոռի և թիւր քաղաքականութիւն է, եթէ մտածեն ոմանք, և

ցաւալի է՝ եթէ կան այնպիսի անհետատես մտածողներ, որք հակառակ մեր բարեխնամ տէրութեան կամաց և օրինաց՝ այնպէս կը խորհին թէ ֆիւրտերն իրենց աւերիչ զրութեամբ միշտ հաստատ մնալու են, որպէս զի նոցա հարստահարիչ ձեռք ծանրանայ ու ճնշէ երկրագործ ժողովրդոց կորացեալ պարանոց. սա նպատակաւ նոքա բարգաւաճին ու զօրանան: Առաջի Աստուծոյ, առաջի աշխարհի և տէրութեան արդար օրինաց, քրէական յանցանք և սոսկալի ոճիր է այս՝ տիրաւոր. երկկուղած, միամիտ, վատաակաւոր, համբերատար և միշտ հաւատարիմ Ազգին և ժողովրդին դէմ: Նոքա որ այնպէս կը մտածեն, միթէ բարեկամ եօն տէրութեան. խորհիլ արժան է թէ ո՞վ կը տուժէ, եթէ ֆիւրտերն իբրեւ փուշ երկրագործին արտը հեղձուցանեն, տէրութիւնը իւր տաաւորող չտաւանայ և քաղաքացին իւր հացը. ի՞նչ կը լինի յայնժամ խեղճ ժողովրդին խեղճ վիճակը: Երկրէն հաց կը պակսի և տէրութեան գանձարանէն զրամ: Արեւուն պէս պայծառ ճշմարտութիւն մի է այս:


Եթէ հողագործին խովին աղօսին մէջ դադրի, անշուշտ զինուորին գէնք իւր պատեանին մէջ կը մնայ, և միթէ զինուորն ինքնին ուժ ունի՞ և նորա բազուկները կը չարժին առանց հացի և զօրութեան: Երկրագործին խրճիթը երբ փլչի, ձայն կը հասնի մինչև տէրութեան Պալատ. ո՞վ չը գիտէ թէ աշխարհիս Պալատներուն հաստատութեան հիմն ու խարխիս շինական ժողովրդոց խրճիթն է: Արդ՝

ինչպէ՞ս կարելի է թոյլատրել որ ֆիւրտին աւերածու ձեռք հողագործին տունը քանդէ և պալատի սիւնները խախտին:

Ուրեմն ժամանակ հասած է. պէտք է կայսերական երկրէն կարճին այն ամեն հարստահարիչ ձեռք, որպէս զի ոչ միայն շինական ժողովուրդ, այլ և քաղաքային և բնիշխանուր Օսմանեան տէրութիւնը վերանորոգ բարեկարգութեամբ յառաջդիմէ ի լաւագոյն ապագայ:

Այլ ևս կը մնայ մեզ ֆիւրտերու հիմնական և հաստատուն բարեկարգութեան համար մի քանի կարեւոր և հնարաւոր դարման յիշել, և առ այս հրաւիրել Յանձնաժողովը յուշադրութիւն, որոյ յանձնուած է ամենայն խելամտութեամբ և խմատութեամբ նոր բարեկարգութեան բարւոք հիմնադիրը պատրաստել:

Առաջին բարեկարգութեան հիմնաքարն է այս. նախ և առաջ ֆիւրտերը իրենց արդի անորոշ և անսահման զրութէնէն հանելով՝ յատուկ և սեպհական հող և երկիր որոշել իրենց բնակութեան համար, նոյն իրաւամբ և օրինօք՝ ինչպէս գիւղացի ժողովրդոց համար արդէն սահմանադրած է տէրութեան օրէնք. և այս առթիւ նոցա ցիրուցան զրութիւնն ամփոփելով նոր կազմութիւն տալ՝ նախ զֆիւրտեամբ կառավարելու համար, և երկրորդ՝ թէ՛ քոսուռն և թէ՛ սոսկիան ֆիւրտերը, որք առանձին առանձին ֆիւրտերու և քրիստոնէից գիւղերու մէջ բնակութիւն հաստատուելու են, յա-



փշտակելով խեղճ գիւղացւոց հողերը, անիրաւութեամբ հողատէր եղած են, և կամ թէ հող ևս չունենալով՝ այնպէս բռնացեր և նստեր են գիւղերու մէջ, մասնաւորապէս չեմ գրեր թէ նոքա ի՞նչեր կը գործեն, զի այդ ինքնին յայտնի է: Ուստի պէտք է այդ մասնաւոր տունները բառնալ այն ամէն գիւղերէն՝ ուր կը գտնուին և խառնել գիւրենք իրենց ցեղերուն հետ, և այս միջոցաւ նախ այդ գիւղերը կ'ազատին նոցա անմիջական և վերահաս բռնութենէն, և երկրորդ՝ այլ ևս պատճառ չը մնար իրենց տիրող ցեղապետներուն, որ շատ անգամ տեղական կառավարութեանց առաջ կը ճգնին արդարանալ կամ անպատասխանատու մնալ, առարկելով թէ այդ մասնաւոր տունները ինքնագլուխ մեր իշխանութենէն և հսկողութենէն հեռի մնալով կը համարձակին չարիքներ գործել և այլն: Սոյն բարեկարգութեան հետը չի մոռնալով նաև բոլոր Տաճկաստանի քիւրտ ցեղերուն ճիշտ և կատարեալ աշխարհադրութիւն մի առնել, որոյ համար շատ մեղադրելի են գաւառապետք, որ մենչե ցայսօր Տէրութեան, երկրին և կառավարութեան այս կարեւոր մասին համար զանցառութիւն են ըրած, և միթէ կարելի՞ է խառնուրդ երկիր մը բարեկարգել առանց կանոնաւոր աշխարհադրութեան:

Երկրորդ՝ թերեւս կարծեն ունանք և այնպէս դատեն թէ քիւրտերն առ հասարակ բովանդակ իրենց ցեղերով ըմբոստ և հարստահարիչ են. ո՛չ.

եթէ ամբողջ քիւրտերուն թիւը մինչև երկու հարիւր հազար հասնի, պէտք է գիտնալ որ այս մեծ թիւէն հազիւ հազ հարիւր տուն կան կամ թոսուն կոչուածները, և կամ մասնաւոր անձինք, որք իրօք և տիրապէս բռնաւոր և հարստահարիչ են քրիստոնէից և միանգամայն իրենց ցեղերուն:

Ուստի կայսերական զօրութեան առաջ ոչինչ դժուարութիւն չկայ այս փոքրաթիւ մասին համար պէտք եղած կարգադրութիւն առնել, դաշտային և լեռնական կեանքէն հանել զիրենք և տեղափոխել քաղաքներու մէջ, վանայ սահմանէն ի կարին բերել, կարնոյ և Մշոյ սահմանէն ի վան տանիլ: Հարկ չէ մտածել թէ ի՞նչպէս կարելի է որ լեռ ու դաշտ սիրող, ոչխար և անասուն դամանող քիւրտերը քաղաքներու մէջ բնակին. ինչպէս պէտք է ապրին նոքա՝ առանց մշակական միջոցներու:

Առ այս իմ պատասխան այս է. փիւրտերն երբ քաղաքացի լինին, կարող են ապրել այնպէս՝ ինչպէս կ'ապրին այնչափ տաճիկ ժողովուրդ կարնոյ, վանայ, Բաղիշոյ և Մշոյ մէջ, որոց թիւը քսան հազարի կը հասնի և նոցա մեծ մասը դարձեալ երկրագործութեամբ կ'ապրին: Եթէ այս միջոցը դժուարանայ, կայ ուրիշ միջոց մի ևս: Կարնոյ և վանայ մէջ Մահադէկերտ հին աւերակ քաղաք, որ այժմ բաւական բնակիչներ ունի իւր դաշտերով, լեռներով, առատ ջրերով և յարմարաւոյն զիրքով, իսկաւ վայելուչ տեղ մի է. ապագային մէջ

Թերեւս նշանաւոր քաղաք մի դառնայ, եթէ տէրութիւն ալժմէն նորա վերանորոգութեան հիմը դնէ, այսինքն նոր Միւթէսարըֆութիւն և կամ Գալմազամութիւն մի հաստատէ և թոսուն կոչուած ֆիւրտերն հոն ամփոփէ կառավարութեան աչքին տակ: Այլ ևս պատճառ չի մնար նոցա բռնուլ թէ մշակութեան և անասուն դարմանելու տեղ չունիմք քաղաքներու մէջ:

Երրորդ կը մնայ հեռատեսել արդ՝ երբ այդ գլխաւոր թոսուններ թէ՛ քաղաքներոն մէջ և կամ տեղ մի ամփոփուին, միթէ մնացած այն բազմաթիւ ֆիւրտերուն ձեռք հարստահարութենէ կը դազուին, և կամ թէ նոքա իրենց թոսուններուն արբանեակ չեն:

Ինչպէս յայտնի է, գաւառաց կեդրոնական կառավարութիւնը ֆիւրտերուն սահմանէն քանի մի աւուր ճանապարհ հեռի լինելով՝ շատ դժուարին է անմիջական իշխանութեամբ և արթնութեամբ հսկել նոցա վրայ, մանաւանդ ձմրան ժամանակ՝ երբ ցրտաստուոյց եղանակը և ձիւներուն թանձրութիւնը ամէն երթևեկութիւն կը դժուարացնեն: Նոյնպէս ամառն ուրիշ դժուարութիւններ ունի, երբ ֆիւրտերը գեղական բնակութեանէն ելնելով՝ վրանարնակ կը լինին և մարախի պէս կը սփռին, զանազան լեռներու գլուխ և իրենց ընտանեկան կեանքէն յայտնի է: Եւթեմ, թէ կիները միայն կաթնարարութեան կը հետեւին, իսկ այրերը խումբ խումբ ձիւորքերով անդաստական կը շրջին, անշուշտ գողնալու՝ կո-

ղովտելու՝ ասպատակելու համար: Մերթ ևս սահմանադրւէն անցնելով, Պարսից և այլ կողմերը ոչխար, ձի և ուրիշ անասուններ աւարելով, կը դառնան այս կողմը, և աստի կը հետեւի մեծ թըշնամութիւն Պարսից և Տաճկաստանի ֆիւրտերուն մէջ, որով միմեանց դէմ վրէժխնդրութեամբ վառուելով՝ այնուհետեւ կը սկսին արշաւանք և կռիւ, և այս պարագային մէջ բոլոր սահմանադրուի եղած գիւղերը ոտնակոխ կը լինին և շատ անգամ ֆիւրտերու կողովուտներու տեղը խեղճ գիւղացի ժողովուրդ կը կողոպտուի:

Ուստի այս ամէն անտեղութեանց առաջն առնելու համար, հարկ է ֆիւրտերու բնակութեանց տեղերը յարմար զիրքերու վրայ մի քանի փոքր զօրանոցներ հաստատել, գէթ հարիւրական ձիւորք զօրքեր զետեղել նոցա մէջ: Մի զօրանոց Ալազուդաշտին յարմար կողմը՝ Հէյտէրանցի կոչուած ֆիւրտերու համար: Մի զօրանոց ևս Մանազկերտի սահմանին մէջ, որ Հասնացի և Ճիպրանցի ֆիւրտերուն կեդրոնն է: Կը մնայ երկու զօրանոց ևս Վանայ և Մշոյ հարաւային կողմերը հաստատել, որպէս զի թէ՛ հոնտեղի լեռնական ֆիւրտերը և թէ՛ Քօզար կոչուած ցեղերը հսկողութեան տակ առնուին, որք Տիգրանակերտի դաշտէն ամէն ամառն ելնելով՝ կը տարածին Տօրոսի լեռանց գօտիներուն վերայ:

Այս զօրանոցներն անհրաժեշտ հարկաւոր են, և բնաւ ծանր ծախուց կարօտ չեն տէրութեան համար. այլ աւելի ևս այդ հեծելազօրաց համար իրենց

պէտքերը հայթայթելու մեծ դիւրութիւն կայ թէ՛
զօրքերու և թէ՛ ձիոց համար. դաշտային բարերե-
րութիւնը ամէն պիտոյքներն առատապէս կը մատա-
կարարէ. փոխադրութեան ևս հարկ չը մընար, զի
հաց և խոտ զօրանոցի չըջապատը լի պատրաստ են:

Զօրրորդ՝ Բիւրտերու ոճրագործութեան համար
մի ներքին, բուն ուրիշ մեծ սկզբնապատճառ կայ,
որ աներեւոյթ կը կարծուի, և այն է քիւրտ շէյխե-
րուն խիստ զաղտնագործ, ծայրայեղ և մոլեռանդ
բարք, որք ծածուկ թելադրութեամբ ամէն հարը-
տահարութեանց և գողութեանց մատնառ կը լի-
նին, որոց համար չէ բնաւ տէրութեան հրովար-
տակ, կրօնի ազատութիւն, գոքա են, որ ամէն
կերպով կը թունաւորեն և կը գրգռեն Բիւրտերը
Բրիտոնէից զէմ, ամէն ոճիրներ անխղճօրէն գոր-
ծել տալու համար: Ես չեմ կրնար թուել թէ քանի՞
եկեղեցիք, քանի՞ վանքեր և որչա՛փ անմեղ մար-
դիկ զոցա մոլեռանգութեան զոհուած են տէրու-
թեան օրինաց հակառակ: Որոց համար մեծ ապա-
ցոյց են Հայոց Պատրիարքարանի կողմէն գրուած
այնչափ բողոքներ, և թէ ի՞նչ է սորա դարմանը,
ես կը գիտարիմ գրել. միայն Բ. Դրան ուշադրու-
թեան կը յանձնեմ, որոյ ձեռն հօգօր և կարող է,
զիտէ քաջ զարժանն տնօրինել, այն որ Բրիտոն-
եայ ժողովրդոց կրօնի ազատութեան համար, ար-
դէն իւր բարձրաշունչ հրովարտակը հրատարակած է
և միշտ նոյնը կրկնէ: Բոլոր պատասխանատու-
թիւնը գաւառապետաց վրայ կը ծանրանայ, որ մեր

բարեխնամ Տէրութեան կամք և օրէնք ի գործ
դնելու ձեռնարկութեան մէջ կը դեղւին, և միշտ՝
անստոյգ պատճառներ յառաջ բերելով՝ նոյն իսկ
իրենք ամէն հրամայեալ բարեկարգութեանց զէմ
խոչընդոտներ կը հանեն, և ահա՛ այս է պատճառ
որ մինչև ցայսօր բարեկարգութեանց հիմը ըստ
մասին դրուեցաւ և չէնք չաւարտեցաւ. գուցէ այս
անգամ ևս գաւառապետք միւսնոյն բան կրկնեն,
թէ երբ իշխանական զօրութեամբ և ստիպանօք
ձեռնարկեմք Բիւրտերու դրութիւնը բարեկարգել,
անշուշտ քիւրտ ցեղերու պէյերը իրենց ժողովրդով
հանդերձ Պարսկից և Ռուսաց սահմանը պիտի գաղ-
թեն կայսերական երկրէն, և ասով Տէրութեան
չա՛ վտանգի, և այլն: Այս պատճառանքը սոսկ են-
թագորութիւն մի է, վասն զի Բիւրտերը այնչափ
խմարացած չեն որ ընդարձակ, ջրաւէտ և խոտաւէտ
երկիր թողուն, մանաւանդ երբ ամենքն իրենց
գիւղ և բնակութիւն հաստատած են: Այս գաղթա-
կանութեան փորձը սահմանադուլիս եղած Հէյսէ-
րանցի ցեղը երբեմն ցոյց կուտայ ոչխարի տրոց
համար, սակայն այդ ամէն՝ սուտ ձևեր են, որպէս
զի երկրին կառավարիչը ստիպուի ոչխարի տուրքը
ստանց համարատուութեան կարգադրել: Նկատել
արժան է այս, միթէ երկրին չա՛ կը պակսի՞ և կամ
Տէրութեան գանձուն յնասակա՞ր է՝ եթէ մի քանի
հարիւր տուն քիւրտ գաղթեն: Միթէ նոցա դուզնաք-
եայ շահը իրենց բազմապատիկ յնասուց հետ՝ հաւատա-
րութիւն ունի՞, և կամ թէ հաւատարիմ գիւղացի

ժողովրդոց բիւրասպատիկ շահը կարելի՞ է զոհել։ Մեծ օրինակ և զգալի փորձ մի կայ մեր առաջ. գրեթէ չորս հարիւր հազարէն աւելի Չերքէզ ցեղ Ռուսիոյ կողմասու լեռներէն յայսկոյս Տաճկաստանի գաղթեցին, միթէ Ռուսիան շնասեօց (և մենք շահեցա՞նք), որոց դէմը քառասուն տարի ամբողջ պատերազմ մղեց և զիրենք նուաճելէն յետոյ՝ ստիպեց կամ զէնքն ի բաց դնելով դաշտաբնակ և երկրագործ ժողովուրդ դառնալ և կա՛մ գաղթել ուր իրենց կամքն է։ Մեծ շահ համարեց կողակասեան երկիրը նոցա աւերիչ ձեռքէն ազատել։

Հինգերորդ՝ մեր ցոյց տուած այս բարեկարգութեան միջոցները և Յանձնաժողովոյդ բոլոր ջանք ընդունայն են. ընդունայն են ամէն խորհուրդ ամեն բարձրագոյն հրաման և ամեն օրինական հրահանգներ, եթէ խմատուն, բարեկարգիչ և հօր գործադիր ձեռք չ'լինին, զի այդ ձեռքն է միայն ամեն բարեկարգութեանց պատկ. և այդ ձեռք պէտք է լինի քաղաքակիրթ, արդարակորով, կարողաձեռն, անխաբ և հաւատարիմ պաշտօնեայ տէրութեան։ Ուստի Բ. Դուռը նախ պէտք է ընտրէ և որոշէ այնպիսի ձեռք մի վանայ կուսակալութեան համար։ Այս վերջին նահանգը, որ թէպէտ այժմ կարնոյ կուսակալութեան տակ ստորնակարգ կառավարութիւն է, սակայն տէրութեան և երկրին շահ կը պահանջէ վերստին կուսակալութեան վերածել, վասն զի վանայ գաւառը խիստ ընդարձակ է և գրեթէ քիւրտերու մեծ մասն այդ

աշխարհին մէջ տարածուած են։ Թո՛ղ այս, միանգամայն սահմանազրուի է Պարսից և Ռուսաց տէրութեան։

Այս նահանգը իր ամեն հանգամանքներով ուշադրութեան արժանի է. պէտք է հօրաձեռն կուսակալութեամբ նշանակութիւն և հաստատութիւն տալ և բարեկարգութեամբ սրբել իր ամեն զեղծումներէն, որպէս զի երկիրը բարեօրելով գաղթականութիւնը դադրի։

Վանայ ընդարձակ կուսակալութիւնը իւր շըրջապատ հեռաւոր գաւառները տիրապէս և զիւրութեամբ կառավարելու համար կարեւոր միջոց մի կայ, որ տէրութեան երկրին և գանձուն մեծ շահ կ'ընձեռէ։ Եթէ վանայ ծովուն վերայ փոքրիկ շոգենաւ մի լինի, որով բոլոր ծովեզերեայ գաւառները կեդրոնին հետը կը կապուին, չորս և հինգ օրեայ հեռաւոր տեղերը միայն հինգ և վեց ժամու կը լինին և ասով երկու քաղաքաց հետը իւր հաղորդակցութիւնը կը զիւրանայ։ Կարին որ կարաւանի ընթացքով տասներկու աւուր ճանապարհ է, վեց կամ եօթը աւուր ճանապարհ կը մնայ։ Արժկէ (Ատիլ քաղաք) զիւղաքաղաքէն, որ վանայ ծովուն ճիշտ արեւմտեան կողմը նաւահանգիստ է, նմանապէս Բաղէշը՝ որ հնգօրեայ ճանապարհաւ հեռու է վանէն, վեց կամ շատ շատ ութ ժամու ճանապարհ կը մնայ, հինգ ժամ ծովէն և երեք ժամ ցամաքէն։ Որով խիստ զիւրին և շահաւոր է Բաղէշոյ նահանգը վանայ կուսակալութեան հետ կապել։

Այս մասին համար միայն այսչափ յիշելով այժմ, ուրիշ պատե՛հ առթիւ ծառայութեան պարտք համարիմ ինձ՝ առանձին աշխարհադրութեան տախտակով մի՛ մանրամասն հանգամանքներով բացատրել թէ քանի՛ շահ ունի տէրութեան և երկրին ժողովրդոց, եթէ հաճի Բ. Դուռը վանայ ծովուն համար տնօրինել սոյն օգտակար ձեռնարկութիւնը:

Որչափ որ վերը յայտնեցինք թէ յիշեալ երեք գաւառաց բարեկարգութեան համար անհրաժեշտ պէտք են երեք բարեկարգիչ ձեռք, սակայն տակաւին բաւական չեն այդ ձեռքեր, եթէ Բ. Դուռը զօրավիզ չը լինի իւր ամենազղու հրամանն կատարելապէս գործադրել տալ, օրինօք, իրօք և անշրջելի հաստատուն կամօք բարեկարգութիւն պահանջելով գաւառապետ պաշտօնեաներէն:

Ներդրութիւն խնդրելով կը համարձակիմ այս ամենակարեւոր պարագայն եւս յիշել աստ՝ գաւառական կուսակալաց այն փոփոխական և յողզող դրութիւնը, յորմէ վնասելով բարեկարգիչ գաւառապետներէն ոմանք իբրեւ իրաւունք յառաջ կը բերեն թէ այն ինչ ձեռնարկելով կը ջանանք յառաջ տանել երկրին կարգադրութիւնը՝ յանկարծ պաշտօնանկ լինելով անգէն կը լքանիմք և մեր ամեն ձեռնարկութիւն ի գերեւ կ'երթայ, մեր սկսածն մեր յաջորդը կը քանդէ և յաջորդին քանդածը՝ ուրիշ յաջորդ մի կամ կը սկսի նոր անդրէն շինել և կամ աւելի եւս քանդել:

Հշմարտութիւն կը ստիպէ զմեզ ուղղութեամբ

խոստովանիլ: Նոքա որ ամենայն հաւատարմութեամբ կը վարեն տէրութեան պաշտօնը, մեծ իրաւունք ունին այս դառն տրտունջ յառաջ բերելու: Մենք մեր օրով և մեր աչքով տեսանք կարնոյ մի քանի կուսակալներն, որք սրտի մտօք աշխատեցան քիւրտերու հարստահարիչ ձեռք կարծել, մանաւնդ յիշատակաց արժանի իսմայիլ փաշան: Սորա օրով քիչ մնաց որ քիւրտերը գէն ի բաց դնելով՝ հողասէր երկրագործ դառնային, վասն զի յիշեալ պաշտօնեայն հաստատուն մտադրութիւն ունէր և փորձառապէս համոզուած էր թէ մինչեւ քիւրտերուն գէնքերն իրենց ձեռքէն չառնուին, անհնարին է որ նոքա զիջանին հերկագործութեան մասը բռնել և սուրին տեղը երկաթէ խոփն ընդունին: Առանց պատերազմի՝ խաղաղութեան ժամանակը՝ ի՞նչ շահ և օգուտ ունի գէնք քիւրտին ձեռք, և եթէ պէտք լինի միայն այն ժամանակ տալ ձեռքը, երբ տէրութիւնը զիրենք ի պատերազմ կը կոչէ: Բայց յիշեալ անձին այս խորհուրդներն՝ որ երկրին բարւոքում կը խոստանային, առանց լիովին գործադրութեան՝ ոչնչացան, երբ Բ. Դուռը զինքը իր պաշտօնէն կոչեց:

Ի վերջոյ կ'աւարտեմ Տեղեկագիրս՝ դարձեալ նոյն բանն միշտ կրկնելով, թէ քիւրտերուն և այլ և այլ գաւառաց կարգադրութեան համար առաջին պէտք բարեկարգիչ ձեռքն է, աշխարհայէն մարդն է, Բ. Դրան արդար և անխաբելի կամքն է, տէրութեան օրինաց անթերի գործադրութիւնն է,


հպատակ ժողովրդոց հաւատարմ և անխտիր ազատութիւնն է, հաւատարիմ ու կարող պաշտօնէից փորձառական ընտրութեանն է, գաւառական պաշտօնէից անփոփոխ շարունակութիւնն է, և այս ամէնուն պսակը՝ Բ. Դրան անխաբ և անդրժեշտ պահանջունն է և այլ ուրիշ ոչինչ, և այս է միայն կայսերական երկրին բարեկարգութեան կատարունն և վախճան:



ՅԱԽԵԼՈՒԱԾ

Տեղեկագրիս կարգին մէջ մոռնալով խիստ կարեւոր մի կէտ, աստ իբրեւ յաւելում կը գրեմ: Երբ Գիւրտերը տէրութեան երկրին մէջ իբրեւ հպատակ ժողովուրդ ձանչցուած են, և միանգամայն դաւանութեամբ բուն Մահմետական ժողովրդին հետ հաւասար կրօնակից են, տէրութեան պարտքն է զիրենք տակաւ առ տակաւ քաղաքակրթութեան մէջ դնել բերել, և նոցա իրաւունքն է պահանջել զայս:

Գիտեմք, քիւրտը-իւր ներկայ դրութենէն դո՛ւն է յաւիտեան և ինքնին կրթութիւն չը պահանջեր: Սակայն ո՛չ միայն կրօնն, այլ և տէրութեան շահ և մարդասիրութեան պարտիք կը պահանջեն որ քիւրտերն ևս արժանի համարուին տէրութեան շնորհաց և կրթութեան: Ուստի ձեռնարկուած բարեկարգութեան մէկ զօրաւոր և բնական միջոցն այս է՝ որ տեղական կառավարութիւնք քիւրտերու զաւակաց կրթութեան հոգ տանին, գէթ ազնուական կոչուած քոստաններուն զաւակները կուսալութեանց մէջ հաստատուած Մեքքեյի Րիզշիյե անուն տէրութեան զպրոցներու մէջ ընդունել, պէտք եղած ուսմունքներ տալով, որով միայն հնար է Գիւրտերու վայրենի բարքը մեղմել ու բարւոքել և զանոնք հետզհետէ քաղաքակրթութեան մէջ դնելով՝ տէրութեան և երկրին հաւատարիմ ժողովուրդ կազմել:





“ԳԱՐՈՒՆ”

ԱԶԱՏ ԼՐԱԳԻՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն., Գ. Ա. Գ. Ա. Կ. Ա. Ն. ԵՒ Գ. Ր. Ա. Կ. Ա. Ն.

Կը հրատարակուի շաբաթ օրերը

(Հրատարակութիւնը սկսած է 1909 Յունուարէն)

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Տարեկան բաժնեգին՝ Պոլսոյ համար 50 դր.
Գաւառի „ 54 „
Արտասահման 12 ճր.

Վեցամսեայ բաժնեգին՝ Պոլիս 25 դր.
Գաւառ 30 „

Ձեռն.՝ հասք 40 փարա:

Հասցե՝ Կ. Պոլիս, Սուրբ Լուսնի, Մօզա քաղ.
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0165366

